Խորհրդում*), այն մեծ յոյսը, որ Տասնի Խորհուրդը ունում էր Մխիթարի վրայ, որ նրան կը յաջողուի դէպի Վենետիկ դրաւել ողջ արեւելքում խոշոր առեւտուր անող եւ արեւելքի ու արեւմուտքի միջեւ դրեթէ մենատէր միջնորդ հանդիսացող հայ վաճառականներին,— այդ յոյսերը պատճառ եղան, որ Տասնի Խորհուրդն էլ իր կողմից միջոցների դիմի: Նա անհրաժեշտ ցուցմունքներ արաւ Վենետիկի Հռովմի դեսպանին, եւ այս վերջինս Մխիթարին հանդիսաւորապէս ներկայացրեց Պապին, ծանօթացրեց մի շարք կարդինալների հետ, ամէն կերպ աղաչեց դատաւորների վրայ իր կառավարութեան հեղինակութեամբ, իսկ Վենետիկի կառավարութեան հմայքը այն ժամանակ շատ բարձր էր Հռովմում:

Վերջ ի վերջոյ, Մխիթարն ու Վենետիկի դեսպանը ձեռք բերին անպարտութեան դատավճիռ, որ արձակուեց 1718 թ. Սեպտ. 26-ին: Սուրբ Անտոնիոսի միաբանութեան պատկանող հայ վարդապետները (այդպէս էին կոչւում այն ժամանակ Մխիթարեանները) արդարացան մեղադրական բոլոր կէտերում, իսկ վանահայր Մխիթարին եւ նրա բոլոր յաջորդներին արտօնուեց Արեւելեան երկրներ քարոզիչներ ուղարկելու իրաւունքը, համաձայն 4-րդ կէտի այն ուխտի, որ Մխիթարեանները անում են ձեռնադրուելիս**):

Թւում է թէ յաղթութիւնը կատարեալ էր. վանքը փրկուեց եւ միաբանութեան քարոզչական գործունէութիւնն ապահովուեց: Սակայն ... հէնց նոյն ժամանակ կարդադրութիւն եղաւ, որ Արեւելք մեկնելուց առաջ, Մխիթարեանները պարտաւոր են ենթարկուել առանձին քննութեան Վենետիկի պատրիարքի դրասենեակում, ստանալ քարոզչութեան արտօնագիր Pro Venia (Concionandi) եւ պէտք է երդուին հաղորդակցութիւն չունենալ հայոց եկեղեցու հետ (Communicatio in Divinis):

Նոր էր վերջացել դատավարութիւնը, որ հէնց Հռովմում Մխիթարից, իբրեւ իրաղեկ անձից, ուզեցին նրա եզրակացութիւնը այն մասին, թէ արդեօք հայ կաթոլիկները կարո՞ղ են այցելել հայ ազգային եկեղեցիները եւ այդ եկեղեցիներում կարո՞ղ են հոգեւոր արարողութիւններ կատարել. նման եզրակացութիւն պահանջուեց եւ պրոպագանդայի դպրոցի նախկին աշակերտ Խաչատուր վարդ. Առաքելեանից, որ Թուրքիայում առաքելական միսիոնարի պաշտօն էր կատարել: Նրանք երկուսն էլ համանման կարծիք յայտնեցին՝ գտնելով անհրաժեշտ արտօնել, որ կաթոլիկ հայերը յաճախեն հայ ազգային եկեղեցին եւ այնտեղ հոգան իրենց հոգեւոր պէտքերը*): Նրանց այս եզրակացութիւնը Հռովմը մերժեց եւ արգիլեց, որ հայ կաթոլիկներն իրաւունք ունենան յաճախելու հայ ազգային եկեղեցիները: Մխիթարի այս կորովի պատասխանը չէր կարող թուլացնել Հռովմի տածած անվստահութիւնը դէպի Մխիթարն ու նրա միաբանութիւնը եւ ապացոյց է Մխիթարի համոզումների ամրութեան: Եւ այս անվստահութիւնը դէպի Վենետիկի Մխիթարեանները մնում է մինչեւ այսօր:

Մխիթարի եւ նրա միաբանութեան կեանքը անցնում էր որոշ տարակարծութեան մէջ Հռովմի հետ: Նման երկուութիւնը եւ դաւանական ու ազգային շահերի բախումը Մխիթարը հարկադրուած է պահել իր գործունէութեան մէջ եւ կտակեց նաեւ իր հետեւորդներին ու յաջորդներին՝ ընդգծելով միշտ ազգային շահերի գերադասութիւնը դաւանականի համեմատութեամբ:

Իր քաղաքական կտակի մէջ, որ ամփոփ-

*) Վենետիկի Հանրապետութեան բարձրագոյն իշխանութիւնը, Դոժին (իշխանին) կից:

**) Դատավճիռը հրատարակուած է՝ Cappellatti, Storia di Respublica de Venezia, Vol. II, p. 221. դատավարութեան մանրամասնութիւնները՝ Nourikhan, L'Abbe Mekhitas, p. 204-220:

*) Խաչատուր վարդ.ի եզրակացութիւնները լատիներէն լեզուով հրատարակուած են Sciarimenti e Documenti-ի մէջ, P. 84. իսկ Մխիթարի եզրակացութիւնը համարւում է կորած: Զմիւռնիայում, 1872 թ. տպուած բնագիրը համարւում է վիճելի, իսկ եզրակացութեան բովանդակութիւնը անվիճելիօրէն նոյնն է, ինչ որ եւ Խաչատուր վարդապետինը: